ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« 23 » փետրվարի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ _____ Մ. Անանյան

ԳԲԽ-14/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 17.02.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը և բողոքն առանց քննության թողնելու մասին 19.02.2016թ. դիմումը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 17.02.2016թ. ներկայացված բողոքով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ Վայքի քաղաքապետարանի կողմից Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցության նպատակով հայտ է ներկայացրել «Մավշին» ՍՊԸ և «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ կոնսորցիումը, որոնք ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. կայացած նիստի թիվ 5 արձանագրությամբ ճանաչվել են ընտրված մասնակից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, 45-րդ, 48-րդ հոդվածները, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 74-րդ կետի «զ» ենթակետը, Ընկերությունը խնդրել է մասնակի դադարեցնել «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. թիվ 5 արձանագրությունը՝ «Մավշին» ՍՊԸ-ի և «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի կոնսորցիումի հայտը հրավերի պահանջներին բավարարող ճանաչելու, «Մավշին» ՍՊԸ-ի և «Նիկդավ Գրուպ» ԲԲԸ-ի կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ անելու մասով: Միաժամանակ, Ընկերությունը խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. թիվ 5 արձանագրության 4-րդ կետի կատարումը:

Կենտրոնին ներկայացված 19.02.2016թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 17.02.2016թ. ներկայացված բողոքը:

2. ԳԲԽ-14/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 19.02.2016թ. դիմումը, առաջարկում է Վայքի քաղաքապետարանի կողմից Վայք համայնքի քաղաքային այգու բարեկարգման և Վայք համայնքի «Արևիկ» մարզադաշտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎՔ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-15» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.02.2016թ. թիվ 5 արձանագրությունը մասնակի դադարեցնելու մասին

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից 17.02.2015թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների վերապատրաստման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-14/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Եղիազարյան